Մարտ 2011 թ. թիվ 6

GLOW ԼՐԱԳԻՐ

Աղջիկները առաջնորդում են մեր աշխարհը

www.stepyouthcenter.org

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ հասարակական կազմակերպություն / տարածվում է անվճար

Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոնը GLOW աղջիկների առաջնորդության և զարգացման ծրագիրն իրականացնում է 2008 թվականից: GLOW ծրագրի շրջանակներում կազմակերպությունը սերտորեն համագործակցում է Հայաստանի տարբեր մարզերում ապրող ԱՄՆ Խաղաղության Կորպուսի կամավորների հետ:

GLOW ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի մարզաբնակ աղջիկների զարգացմանն ու առաջնորդության պոտենցիալի բացահայտմանը: Ծրագիրը հնարավորություն է տալիս աղջիկներին տեղեկանալ առողջ ապրելակերպի, գենդերային հարցերի, թրաֆիկինգի, մարդու իրավունքների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: GLOW-ն տեղեկատվական ծրագիր լինելուց բացի, նպաստում է աղջիկների ինքնաճանաչմանն ու սեփական պոտենցիայի բացահայտմանը, աջակցում է կարիերայի պլանավորմանը, նպաստում ստեղծագործական մտքի և քննադատական մտածողության ձևավորմանը, հնարավորություն տալիս առաջնորդության և թիմային աշխատանքի հմտությունների զարգացմանը:

Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոնը քայլեր է ձեռնարկել, որպեսզի GLOW ծրագիրը լինի նպատակային և ապահովի տեղեկատվության և հմտությունների փոխանցում և շարունակականություն:

Մեր՝ երեխաներիս իրավունքների մասին

Խոջոյան Արփինե
ք. Չարենցավան, Կոտայքի մարզ

Աղջոյն: Ես մեկն եմ այն աղջիկներից, ով մասնակցել է GLOW ամառային դպրոցին: Մենք այնտեղ զրուցել ենք տարբեր թեմաների մասին և դրանց ավելի մանրամասն ծանոթացել: Այդ թեմաներից մեկն էլ մեր՝ երեխաներիս իրավունքներն են, ինչի մասին ուզում եմ խոսել:

Նախ ասեմ, որ երեխաների իրավունքները անչափահաս մարդուն ընձեռնված հնարավորություններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի գոյության, դաստիարակության, զարգացման և որպես մարդ կայացման համար:

Մարդը մինչև չափահաս՝ ինքնուրույն անձ դառնալը երեխա է: Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ: Առաջին անգամ, երեխաների իրավունքների մասին հռչակագիրը հռչակել է 1959թ.՝ ամրապնդելով երեխայի նկատմամբ վերաբերմունքի 10 սկզբունքներ, որոնք կոչ էին անում բոլոր պետություններին, ստեղծել բոլոր հնարավորություններն ու բարենպաստ պայմանները, որպեսզի երեխաները զարգանան ֆիզիկապես, բարոյապես, հոգեպես և սոցիալապես առողջ, բնական ուղիով, ազատության և արժանապատվության պայմաններում: Սակայն առաջին հռչակագրի դրույթները խորհրդատվական էր: 1989թ. Երեխայի իրավունքների մասին համաձայնագիրը, հաղթահարելով հռչակագրի թերությունը, ամբողջական կերպով ամրագրեց երեխայի իրավունքները: Համաձայնագրին միացած երկրները պարտավորվում են կենսագործել երեխայի իրավունքները:

1996թ. հռչակված **Երեխայի իրավունքների մասին** ՀՀ օրենքը ամրագրում է բոլոր երեխաների իրավունքները՝ անկախ սեռից, ազգությունից, ռասայից, դավանանքից, սոցիալական և այլ վիճակից: Պետությունը պարտավորվում է լինել երեխաների իրավունքների երաշխավորն ու պաշտպանը:

Ըստ **Երեխաների իրավունքների մասին** ՀՀ օրենքի՝ ՀՀ-ում ապրող յուրաքանչյուր երեխա ունի անվան և քաղաքացիության իրավունք, սեռական շահագործման բոլոր ձևերից, թմրանյութերի և հոգեներազդող նյութերի ապօրինի չարաշահումից պաշտպանված լինելու իրավունք, տնտեսական շահագործումից պաշտպանված լինելու և աշխատանքի իրավունք, մտքի, խղճի և դավանանքի իրավունք, ձեռնարկատիրական գործունեության իրավունք ու իր վաստակը տնօրինելու իրավունք, հանգստի իրավունք, առողջության պահպանման իրավունք, կրթության իրավունք, մշակութային կյանքին մասնակցելու իրավունք, ստեղծագործական ազատության իրավունք, բարեկեցությանը նպաստող տեղեկատվության իրավունք և այլ իրավունքներ:

Մենք պետք է իմանանք մեր իրավունքները և պաշտպանենք ու օգտագործենք դրանք:

Երեխան ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

Պետությունները պարտավոր են հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր ինքնուրույնությունը՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը:

Երեխան իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով:

Պետությունները հարգում են երեխայի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:

Պետությունները ճանաչում են երեխայի՝ միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունքը:

Ղազարյան Անի
ք. Կապան, Սյունիքի Մարզ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

էջ 2

Հասակակցի կրթություն

էջ 3-6

Ինչպես GLOW ծրագիրը վերափոխեց ինձ

էջ 7

ԵՍ եւ GLOW-ն

Հայաստանի Կրթություն

GLOW-ն իմ կյանքում

Ես GLOW-ում անց եմ կացրել ութ հիանալի օրեր: Դրանք իմ կյանքի ամենաhիշարժան և ուսուցողական օրերն էին: Այդ օրերի ընթացքում ինձ բախտ վիճակվեց ձեռք բերել նոր ընկերուհիներ, ստանալ նոր հմտություններ և ընդլայնել գիտելիքներս: GLOW-ից հետո մենք` աղջիկներս շարունակում ենք մեր ընկերությունը և համոզված ենք, որ այդ ընկերությունը կշարունակվի միշտ: Այդ դպրոցը դարձավ իմ կյանքի դպրոցը: Այն ինձ հնարավորություն տվեց ինքնահաստատվելու և իրազեկ լինելու պարտադիր թեմաների մասին:

GLOW-ից վերադառնալուն պես որոշեցի կազմակերպել սեմինարներ և GLOW-ում ստացած գիտելիքներս ու հմտություններս փոխանցել հասակակիցներիս: Հետաքրքրվեցի, թե ովքեր կցանկանան մասնակցել իմ սեմինարներին և ում է հետաքրքիր տվյալ թեմաները` ՄԻԱՎ/ ՁԻԱՀ, թրաֆիքինգ, գենդերային հարցեր, ինքնաճանաչում, կարիերայի զարգացում: Իմ պատրաստած սեմինարները տվեցին իրենց ցանկալի արդյունքը. իմ հասակակիցները տեղեկացված եղան այս կարևոր թեմաների մասին, շնորհակալ եղան և ցանկություն հայտնեցին մասնակցել հաջորդ տարվա GLOW-ի ամառային ուսուցողական դպրոցին:

Կայսերյան Մոնա
ք. Երևան

Ողջույն:

Ես` Անի Մխոյանն եմ, 15 տարեկան: Ապրում եմ Լոռու մարզի ք. Ստեփանավանում:

Վերջապես ամառային արձակուրդներ, քննություններ և ահա ինձ առաջարկում են լրացնել GLOW ճամբարի հարցաթերթիկը: Ես առանց մի վայրկյան մտածելու անգամ համաձայնեցի: Թերթիկը լրացնելուց մեկ շաբաթ անց ինձ զանգահարում է Լիլիթ Սիմոնյանը և կանչում հարցազրույցի: Մեր դպրոցից հարցաթերթիկը լրացրել էինք 3 աղջիկներով: Գնացինք Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոն, մեզ ընդունեցին շատ ջերմ, ծանոթացանք Լիլիթի հետ: Հարցազրույցից 2 շաբաթ անց նորից զանգահարեցին և հայտնեցին ուրախալի նորությունը, որ ես մասնակցելու եմ GLOW ճամբարին: Ես ուրախացա, ուրախությանս չափ չկար, անմիջապես լուրը հայտնեցի ծնողներիս և միասին սկսեցինք պատրաստվել: Եվ ահա հուլիսի 26-ն է, առավոտյան ժամը10-ը: Սրտատրոփ սպասում էինք մեքենային: Մեքենան վերջապես եկավ և մենք ուղևորվեցինք դեպի քաղաք Լոռավետ: Լոռավետում Ամեն ինչ հիանալի էր, ծանոթացանք օրակարգին և սկսվեց մեր անմոռաց պահերը: Սկսվեցին նոր ծանոթությունները, նոր շրջապատ, նորովի գիտելիքներ, խտացված օրակարգ: Խոսում էինք տարբեր թեմաներից` թրաֆիկինգ, ընտանեկան բռնություն, գենդերային անհավասարություն, մարդու իրավունքներ և այլն: Անմոռաց և լի արկածներով 8 օր: Ես բոլորին ցանկանում եմ ապրել այն օրերն ու պահերը, որոնք ապրել եմ ես GLOW ճամբարում: GLOW աղջիկների ամառային դպրոցում մենք տեղեկացանք, որ կարող ենք սեմինարներ անցկացնել մեր բնակավայրերում, մեր հասակակիցների հետ: Վերադառնալով GLOW-ից ես անմիջապես ձեռնամուխ եղա սեմինարների կազմակերպմանը: Սեմինարս անց եմ կացնելու 14-16 տարեկան աղջիկների հետ: Սեմինարիս թեման է թրաֆիկինգը, այն նպատակ ունի փոխանցել իմ հասակակիցներին այն ամենը, ինչ սովորել եմ GLOW-ում: GLOW հաջորդ լրագրից կտեղեկանաք իմ կատարած աշխատանքների մասին:

Շնորհակալություն GLOW անձնակազմին մեզ կյանքի դժվարություններին պատրաստելու և այդ 8 անմոռանալի օրերը պարգևելու համար:

Մխոյան Անի
ք. Ստեփանավան, Լոռու մարզ

Իմ առաջին սեմինարը

GLOW-ի շնորհիվ ձեռք բերած գիտելիքների այդ անսպառ շտեմարանը ես ցանկացա օգտագործել ի շահ իմ հասակակիցների շրջանում տեղեկատվության տարածման գործի: Երկար ժամանակ մտավախություն ունեի, որ չեմ կարողանա ըստ արժանվույն ներկայացնել իմ մտքերը: Հասկանալով, որ ես GLOW-ի «առաջյալներից» մեկն եմ և պետք է իմ հասակակիցների շրջանում տարածեմ խնդիրների լուծման նոր մոտեցումներ, իմ մեջ ուժ գտա և անցկացրի իմ առաջին սեմինարը: Սեմինարը վերաբերվում էր գենդերային խնդիրներին: Սեմինարի աշխատանքին ներգրավված էին և տղաներ, և աղջիկներ: Մեզանում կարծիք կա, թե աղջիկները միշտ պիտի լինեն հլու-հնազանդ, հանդուրժող: Սեմինարիս նպատակն էր հիմնովին կործանել այդ մտածելակերպը և նոր դրույթներ սահմանել: Աղջիկների մոտ դա մեծ ոգևորություն առաջացրեց, որն էլ խթանեց նրանց ակտիվ մասնակցությանը, ազատ արտահայտվելուն: Սեմինարը անցկացվեց նոր նյութի հաղորդմամբ, հարց ու պատասխանով, ինչպես նաև կարծիքների փոխանակման միջոցով: Թեպետ իմ ուժերով կազմակերպված սեմինարը տևեց մեկ ժամ, այնուամենայնիվ, ես շատ ուրախ եմ, որ հասակակիցներիս փոխանցեցի իմ գիտելիքները և նպաստեցի նրանց նոր մտածելակերպի ձևավորմանը:

Խաչատրյան Մանե
ք. Կապան, Սյունիքի մարզ

> «Հասկանալով, որ ես GLOW-ի «առաջյալներից» մեկն եմ և պետք է իմ հասակակիցների շրջանում տարածեմ խնդիրների լուծման նոր մոտեցումներ, իմ մեջ ուժ գտա և անցկացրի իմ առաջին սեմինարը:»

2010թ. մոտենում է իր ավարտին: Իմ հիշողության մեջ դրոշմվեցին այն օրերն ու պահերը, որը ես անցկացրի GLOW ճամբարում` իմ նոր ընկերների հետ:

Ես ձեզ ողջունում եմ Վայոց Ձորից: Ես Շողերն եմ 14 տարեկան, Սովորում եմ 8-րդ դասարանում: Սիրում եմ այն դասարանը, որտեղ սովորում եմ:

5 տարեկանից հաճախում եմ պարի: Իմ սիրելի զբաղմունքը պարելն է: Զբաղմունքից բացի, պարն ինձ համար մի մեծ աշխարհ է, երազում եմ դառնալ պարուհի:

Ամառային արևոտ ու գեղեցին օրերից էր, երբ պարից վերադարձա և մայրիկս ինձ հայտնեց, որ զանգահարել են GLOW-ից և հայտնել, որ ես հաղթել եմ այդ ծրագրում: Այդ լուրն ինձ ուրախացրեց: Մասնակցելով այդ ծրագրին ես մեծ բավականություն ստացա: Իմ գիտելիքները ամբողջնաց վերադարձա տուն:

Դասերը սկսվեցին, որոշ ժամանակ անցավ: Իմ մտքում մի միտք ծագեց, ես որոշեցի սեմինար կազմակերպել իմ դասարանի երեխաների համար: Մի քանի օր անց փոխտնօրենի, իմ դասղեկի և դասարանի ընտրությամբ ես աշակերտական խորհրդի նախագահ ընտրվեցի: Այդ հանգամանքն ինձ ուժ տվեց և ստիպեց, որպեսզի կազմակերպեմ այդ սեմինարը:

Սեմինարում ընդգրկել էի հասակակցի կրթություն և ինքնագնահատում թեմաները: Մասնակցում էին 13-15 տարեկան աղջիկներ և տղաներ: Սեմինարին մասնակից դարձավ նաև իմ դասղեկը` Քնարիկ Մուրադյանը: Ես երեխաներին ծանոթացրեցի այդ թեմաներին: Երկար քննարկեցինք, ես ուզում էի իմ գիտելիքները անպայման փոխանցել իմ հասակակիցներին: Այդ ամենը ամփոփեցինք խաղերի միջոցով և կատարեցինք անհատական աշխատանք: Ես հուսով եմ, որ մյուս սեմինարներին ինձ կաջակցեն իմ դասընկերները:

Ես հպարտ եմ, որ իմ գիտելիքները փոխանցեցի իմ հասակակիցներին:

Յուրաքանչյուր մարդ պետք է հավատա իր ուժերին, միայն այդ դեպքում կկատարվեն նրա իղձերը:

Հարությունյան Շողեր
ք. Վայք,
Վայոց Ձորի մարզ

Ինչպես GLOW ծրագիրը վերափոխեց ինձ




Ներկայացնում ենք հատվածներ GLOW շրջանավարտների 2011 թվականի GLOW ակնարկների մրցույթին ներկայացված շարադրություններից: Մրցույթի հաղթող ճանաչվեցին Անի Վարդանյանը (Գյումրի), Ջեմմա Սահակյանը (Դիլիջան), Ռիտա Անանյանը (Չորական), Անի Ղազարյանը (Կապան) (նկարները՝ վերևում, աջից ձախ):

Ինքնաճանաչում

GLOW-ն նման է մի հեքիաթի, որտեղ բոլոր հերոսները բարի են և հոգատար: Այդ հերոսներից մեկն էլ ես եմ, որ հայտնվեց այդ հեքիաթային աշխարհում, վերցրեց մի պարկ գիտելիք, ընկերացավ բոլոր հերոսների հետ և վերադարձավ որպես մի փոքրիկ կայացած մարդ:

Վարդանյան Անի

ք. Գյումրի, Շիրակի մարզ,

ԳԼՕ 2010

համայնք

GL OW ծրագիրը հնարավորություն տվեց ճանաչել նախ ինքս ինձ: Իրոք, եթե ինքդ քո ներսը չնայես, չբացահայտես քեզ, չես կարող ճանաչել, գնահատել ուրիշին:

Մարիաննա Հակոբյան

գյուղ Խոտանան, Սյունիքի մարզ,

ԳԼՕ 2010

Հեքիաթ

GLOW-ն ինձ հնարավորություն տվեց ստեղծելու իմ աշխարհը և իմ մեջ բնավորության շատ գծեր բացահայտել: GLOW-ից հետո ես կարողացա գտնել և ճանաչել իմ ես-ը, հասկանալ, թե ով եմ ես, իմանալ իմ բնավորության լավ ու վատ գծերը և այն ուղիները, որոնցով կարող եմ փոխել բնավորությանս վատ կողմերը:

Խոջոյան Արփինե

ք. Չարենցավան, Կոտայքի մարզ,

ԳԼՕ 2010

իրավունք

GLOW ծրագրի շնորհիվ ես ձեռք բերեցի մարդկային բնավորության այնպիսի գծեր, որոնք ամբողջ կյանքիս ընթացքում կառաջնորդեն ինձ և ճիշտ ուղու վրա կդնեն:

Անի Վարդանյան

ք. Գյումրի, Շիրակի մարզ,

ԳԼՕ 2010

«Ծերունին գիտուն չի լինում, բայց զլխովն անցած է լինում», մի խոսք, որն ապացուցում է կյանքի տված դասերի կարևորությունը մարդու մտավոր զարգացման գործում:

Ռիտա Անանյան

գյուղ Չորական, Տավուշի մարզ,

ԳԼՕ 2010

ընկերներ

Աղջիկներ առաջնորդության և զարգացման ծրագիրը նոր ակնկալիքների ու հնարավորությունների մի ծաղկեփունջ էր, որը մեր համայնքից հենց ես էի բռնել:

Քալանթարյան Սաթենիկ

գյուղ Չորաթան, Տավուշի մարզ,

ԳԼՕ 2010

պատասխանատվություն

GLOW-ից առաջ ես սովորական հայ աղջիկ էի, GLOW-ից հետո՝ նորից սովորական հայ աղջիկ, բայց բարձր նպատակներով և նպատակին հասնելու ակտիվ պայքարին պատրաստ: GLOW-ից առաջ ես համակերպվող էի, հնազանդ, պասիվ վարքագծով, ոչ շատ շփվող, իսկ GLOW-ից հետո ես ավելի շատ նախաձեռնող եմ, շփվող ու ակտիվ, անընդհատ նորանոր փոտրատուքների մեջ, փորձում եմ համախմբել այնպիսի երիտասարդների, որոնց հետ կարող ենք մեր երկրի համար մի լավ բան անել, թեկուզ և մեր ուժերի չափով:

Նվարդ Փադունց

գյուղ Խնձորեսկ, Սյունիքի մարզ,

ԳԼՕ 2010

իրազեկություն

Այն վախվորած, ամոթխած աղջնակին GLOW-ն դարձրեց համարձակ, ուժեղ, անվախ աղջիկ:

Պողոսյան Ժենյա

գյուղ Դավիթ-Բեկ, Սյունիքի մարզ,

ԳԼՕ 2010

GLOW-ն մի շատ մեծ, հեքիաթային աշխարհ բացեց իմ առաջ: Գյուղական փոքրիկ միջավայրից,որտեղ ստվերում էի գտնվում և ոչ ոք չէր հավատում իմ ուժերին, տեղափոխվեցի մի այնպիսի միջավայր, որտեղ ինձ լսում են, հասկանում, ընդունում այնպիսին ինչպիսին կամ: Այս ամենն իմ մեջ զարգացրեց այնպիսի բնավորության գծեր, որոնք անկասկած անհրաժեշտ են լինելու իմ ապագա գործունեության համար: Ես զգացի, որ ես կամ և կարող եմ հետագայում կայանալ որպես լավ մարդ և լավ մասնագետ:

Եղիազարյան Գայանե

Նոյեմբերյան, Տավուշի մարզ,

ԳԼՕ 2009

հարգանք

Ճամբարային օրերն իմ առջև բացեցին մինչ այդ ինձ անծանոթ զարմանահրաշ աշխարհ: Աշխարհ, որի հարգաշարային շտեմարանը շատ բան ուսուցանեց՝ զարմանալի, հրաշալի: Ես սկսեցի ճանաչել կյանք կոչվածը, որի առեղծվածները այդ համբերությամբ, հեռատեսությամբ և լավատեսությամբ զինված՝ պետք է պեղեմ շերտ առ շերտ:

Հակոբյան Մարիաննա

գյուղ Խոտանան, Սյունիքի մարզ,

ԳԼՕ 2010

GLOW-ն ամենախաղաղ և միևնույն ժամանակ ամենափոթորկոտ ծովն էր, որի մի կաթիլն էլ ես դարձա:

Քալանթարյան Սաթենիկ

գյուղ Չորաթան, Տավուշի մարզ,

ԳԼՕ 2010

աշխարհայացք

Չկա մի քաղցր բուրմունք, որ ավելի կախարդական լինի, քան GLOW-ի շունչն ու բույրը: GLOW-ն նման է դաշտում սփռված ծաղիկների, իսկ նրա մշակույթը ծաղկանց բուրմունքն ու գույներն են:

Նաիրա Գյուլզադյան

գյուղ Գյուլագարակ, Լոռու մարզ,

ԳԼՕ 2008, 2010

Ճանաչեցի ինքս ինձ և թե ինչ հնարավորությունների կարող եմ հասնել կյանքում: Այս ծրագրի շրջանակներում իմ բնավորությունը ավելի նպատակասլաց և հաստատուն դարձավ: Սովորեցի կյանքում միշտ առաջ քայլել, երբեք չհանձնվել: Ես մյուս մասնակից աղջիկների հետ շփվելով ոգեշնչվեցի և ինքնավստահ դարձա:

Նաիրա Գյուլզադյան

գյուղ Գյուլագարակ, Լոռու մարզ,

ԳԼՕ 2008, 2010

Ինչպես GLOW ծրագիրը վերափոխեց ինձ

ինքնահաստատում

Իմ մեջ այնպիսի փոփոխություններ էին ի հայտ եկել, որ զգում էին ընտանիքի բոլոր անդամները: Նրանք իմ մեջ տեսան համարձակ, ինքնավստահ մի աղջնակի: Ես ծամբարից վերադարձա ինքնահաստատված, վստահ իմ ուժերին: Այն վախվորած, ամոթխած աղջնակին GLOW-ն դարձրեց համարձակ, ուժեղ, անվախ աղջիկ:

Պողոսյան Ժենյա

գյուղ Դավիթ-Բեկ, Սյունիքի մարզ,
GLO 2010

ինքնավստահ

Ես ամբողջովին լցված էի դրական լիցքերով: GLOW-ն իմ մտահղացումները ընդլայնեց, հասկացրեց որ պետք է ճիշտ ապրել, ապրել՝ ունենալով առաջխաղացման բարձր զգացում և գիտելիքների աճ: Ես ինձ նմանեցնում եմ մի մարդու, ով գնացել է ջրի դատարկ դույլը ձեռքին և ետ է գալիս ջրով լիքը դույլով:

Անի Սաղաթելյան

գյուղ Ծովագյուղ, Գեղարքունիքի մարզ,
GLO 2010

Ես GLOW-ում սովորեցի հարգել դիմացինին և նրա կարծիքը, լսել և հաշվի առնել նրան: Ես այժմ ձեռք եմ բերել շատ ընկերներ Հայաստանի տարբեր մասերում: Ես հասկացա, որ մեզնից յուրաքանչյուրը, անկախ բնակվելու վայրից և սոցիալական վիճակից, երեխա է, ով բնակվում է Հայաստանի Հանրապետությունում և ունի հավասար իրավունքներ:

Արփինե Խոջոյան

ք. Չարենցավան, Կոտայքի մարզ,
GLO 2010

իրազեկություն

Շփումը ինձ սովորեցրեց զանազանել լավ ու վատ կողմերը, դրականն ու բացասականը, կարողանալ ընտրություն անել՝ հիմք ընդունելով այն որակական հատկանիշը, որ միայն կարող է հանգեցնել մարդկայինին: Այն սեփական կարծիք ունենալու, դիրքորոշվելու ու կողմնորոշվելու այն մեծագույն փորձությունն է, որի բախվելով ձեռք ենք բերում նոր հմտություններ ու հնարավորություններ:

Աշխեն Առաքելյան

գյուղ Խնձորեսկ, Սյունիքի մարզ,
GLO 2010

գիտելիք

Կարողացա ճանաչել ինքս ինձ, կողմնորոշվեցի մասնագիտության ընտրության հարցում և որ ամենակարևորն է ձեռք բերեցի մի շարք ընկերներ:

Սիմոնյան Արևիկ

ք. Վանաձոր, Լոռու մարզ,
GLO 2010

Այդ պահից սկսած (GLOW ծրագրին մասնակցելուց հետո) որոշումս փոխվեց մասնագիտական կրթության հարցում: Ընդունվեցի Երևանի Գլաձոր համալսարանի ժուռնալիստիկայի բաժին:

Գևորգյան Արմինե

գյուղ Մարմարաշեն, Արարատի մարզ,
GLO 2008

Ամենակարևորը մարդկային բարի հարաբերություններն են, որ կարող են հաղթահարել ամեն դժվարություն:

Անանյան Ռիտա

գյուղ Հորական, Տավուշի մարզ,
GLO 2010

Ընկերներ ձեռք բերելը համարում եմ ծրագրին մասնակցելուիմ ամենամեծ ձեռքբերումը:

Աթյան Մանե

գյուղ Տատթ, Սյունիքի մարզ,
GLO 2010

Միայն հիմա, երբ հեռվից վերագնահատում եմ իմ անցկացրած օրերը, հիշում եմ ընկերուհիներիս, հասկանում եմ, թե ինչքան եմ փոխվել ինքս, ինչքան հասուն եմ դատում տարբեր հարցերի շուրջ և ինչքան պատրաստ եմ այդ հարցերին լուծում տալու խնդրում: Սա միանշանակ GLOW ծրագրի ազդեցությունն է իմ անձի վրա: Բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են նպատակասլացությունը, պահանջատեր լինելու կարողությունը, ուշադիր լսելու և հետո միայն որոշ հարցերի շուրջ քննարկումներ կատարելու , անհրաժեշտության դեպքում նախաձեռնող լինելը, իսկ չիմացածի մասին տարբեր աղբյուրներից ինֆորմացիա փնտրելն ու գտնելը, բնավորությանս այն նոր գծերը դարձան:

Նվարդ Փաղունց

գյուղ Խնձորեսկ, Սյունիքի մարզ,
GLO 2010

մասնագիտական կողմնորոշում

Այս ծրագրից հետո, ես հասկացա, որ հետագայում այնպիսի աշխատանք պիտի կատարեմ, որը կնպաստի քաղաքացիական հասարակության զարգացմանն, այսինքն ես ինձ տեսնում եմ այն բնագավառում, որը սերտորեն կապված է հասարակական խնդիրների վերահանման, իսկ դրանց լուծման հետ իմ աշխատանքով պիտի նպաստեմ, որ մեր հասարակությունն ավելի առաջադիմ դառնա:

Փանդունց Նվարդ

գյուղ Խնձորեսկ, Սյունիքի մարզ,
GLO 2010

Ես հասկացա, որ լեզուների իմացությունը կմեծացնի իմ հնարավորությունները՝ շրջելու աշխարհով մեկ, նորանոր ծանոթություններ ձեռք բերելու, ազատ շփվելու մարդկանց հետ, ուսումնասիրել նրանց պատմությունը, մշակույթը, սովորությունները:

Հայթյան Վալենտինա

Սևան, Գեղարքունիքի մարզ,
GLO 2010

GLOW-ի ծրագրին մասնակցելուց հետո ես որոշեցի դառնալ տնտեսագետ և ունենալ սեփական բիզնեսը, որպեսզի հետագայում կարողանամ իմ վաստակած գումարով և՛ իմ կյանքը բարեկեցիկ դարձնել, և՛ բարեգործական ծրագրերին ակտիվ մասնակցություն ունենալ: Մի խոսքով, ես GLOW-ից հետո կարողացա իմ մեջ արթնացնել առաջնորդի հոգին, և դրա շնորհիվ այժմ ես Չարենցավանի N2 հիմնական դպրոցի Աշակերտական խորհրդի նախագահն եմ:

Խոջոյան Արփինե

ք. Չարենցավան, Կոտայքի մարզ,
GLO 2010

մասնակցություն աշխարհայացք

Ցավոք աշխարհում շատ են անարդարությունները, բայց տեղյակ լինելով իմ իրավունքների մասին, արդեն կարող եմ անկաշկանդ պայքարել իմ իրավունքների համար և պաշտպանել դրանք: Սակայն մինչ GLOW-ին մասնակցելը ես ամաչկոտ ու կաշկանդվող էի և չէի կարող ազատ արտահայտել մտքերս ու պայքարել իրավունքներիս համար: Շնորհիվ GLOW-ի ես կայացա որպես մարդ և այժմ, եթե նպատակ եմ դնում իմ առջև, ապա ամեն կերպ փորձում եմ հասնել դրան: GLOW ամառային դպրոցում գտա ինքս ինձ և վերջապես հասկացա, թե ինչ եմ ուզում այս կյանքից և թե որի է իմ նպատակը: GLOW-ն բարձրացրեց իմ մեջ պայքարելու և առաջ գնալու ոգին:

Գոհար Գրիգորյան,

գյուղ Բազում, Լոռու մարզ,
GLO 2009

համարձակ

Ես ունեմ նպատակ. այն է բարձրացնել մարդկանց իրազեկվածությունը տարբեր խնդիրների մասին, համախմբելու միևնույն գաղափարի շուրջ և ցանկացած նպատակ իրականացնել միահամուռ ուժերով: Ծրագիր, որի միջոցով ես փորձելու եմ ներկայացնել իմ հասակակիցներին այնպիսի խնդիրներ, ինչպիսին է՝ մարդու իրավունքներ, գենդեր, պայքար թրաֆիքինգի դեմ, ինքնագնահատում, շրջակա միջավայր, առողջ ապրելակերպ, թիմային աշխատանքի ու առաջնորդության զարգացում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում և այլ օրհասական խնդիրներ, դրանց վտանգները և լուծումները:

Ջեմմա Սահակյան

ք. Դիլիջան, Տավուշի մարզ,
GLO 2010

Ինչպես GLOW ծրագիրը վերափոխեց ինձ

Ես սովորեցի տարբերել երազանքն ու նպատակը:

Վարդանյան Հռիփսիմե

գյուղ Վարդաբլուր, Լոռու մարզ,
ԳLO 2010

GLOW-ից հետո սկսել եմ առողջ ապրելակերպ վարել, կյանքի նկատմամբ լցված եմ լավատեսությամբ: Որոշել եմ մասնագիտանալ երկու ուղղություններով՝ դառնալ տնտեսագետ և հոգեբան:

Ղազարյան Անի

Կապան, Սյունիքի մարզ,
ԳLO 2010

Ես հասկացա, որ յուրաքանչյուր մարդ պետք է ունենա ուժեղ կամք, կարողանա հաղթահարել դժվարությունները և երբեք չմտածի, որ անհնարին բան կա այս աշխարհում: Ամենադժվար պահին էլ հենց ծնվում է հնարը, որով կարող է մարդ սխրանք գործել:

Հարությունյան Արփինե

բ. Վայք, Վայոց Ձորի մարզ
ԳLO 2009-2010

GLOW-ն համարձակություն տվեց վստահել ինքս ինձ և առանց վարանելու կանգնել մեծ լսարանի առջև ու ստացածս գիտելիքները փոխանցել նրանց:

Սուրենյան Սյուզաննա

գյուղ Արծվաբերդ, Տավուշի մարզ,
ԳLO 2010

Իմ մեջ ցանկություն առաջացավ լինել կամավոր, անփոխհատույց օգնել մարդկանց:

Քալանթարյան Սաթենիկ

գյուղ Չորաթան, Տավուշի մարզ,
ԳLO 2010

Այս հրաշալի, բազմակողմանի զարգացած ծրագրի շնորհիվ ես ունեցա հրաշալի ընկերներ, որոնց հետ մինչև հիմա մեր կապը շարունակվում է:

Եղիազարյան Գայանե

Նոյեմբերյան, Տավուշի մարզ,
ԳLO 2009

նպատակներ

GLOW-ն օգնում է հոգևոր, ֆիզիկական, մտավոր զարգացմանը,հասարակական պոտենցիալի և բնավորության ձևավորմանը: Ես մի գորշ ծուտիկ էի ,ով չէր կարողանում առանձնանալ հոծ բազմությունից,իսկ այժմ ես լիովին ուրիշ մարդ եմ`նոր կյանքով,նոր գաղափարներով և նոր հաջողություններով:

Ղազարյան Անի

Կապան, Սյունիքի մարզ,
ԳLO 2010

սեփական կարծիք

Ապագայում ծրագրում եմ կազմակերպել նմանատիպ ծրագրեր, գյուղական գողտրիկ անկյուններից դուրս հանել ամաչկոտ, իրենց ուժերին անվստահ երիտասարդների, զարգացնել նրանց մեջ առաջնորդ լինելու հատկությունը, ինքնավստահություն տալ նրանց, քանի որ հայ ժողովուրդը պետք է ունենա խելացի, գիտակ, ինքնավստահ առաջնորդներ, ովքեր կկարողանան ոտքի կանգնեցնել մեր ազգը, մեր հայրենիքը:

Եղիազարյան Գայանե

Նոյեմբերյան, Տավուշի մարզ,
ԳLO 2009

Բացի նրանից ,որ ծրագրում առաջարկված թեմաները բավականին արդիական և կարևոր են աղջիկների զարգացման և մասնագիտական կողմնորոշման հարցում, իմ վրա մեծ ազդեցություն ունեցավ ունեցավ GLOW ջոկատավարների և կազմակերպիչների հետ շփումը: Շփվելով բավականին վաղ տարիքում կայացած մարդկանց հետ հասկացա, որ ես էլ կարող եմ նրանցից մեկը դառնալ, ուստի փորձում եմ նախադրյալներ ստեղծել կայացած մարդ դառնալու նպատակս իրագործել:

Աթյան Մանե

գյուղ Տաթև, Սյունիքի մարզ,
ԳLO 2010

GLOW-ն ինձ սովորեցրեց լինել լավատես և երբեք չկորցնել հույսս, օգնեց ձերբազատվել բարդույթներից և լինել ազատ ու անկաշկանդ: Նա օգնեց ինձ արագ կողմնորոշվել և ճիշտ լուծում տալ խնդիրներին, իրավիճակի լրջությունը որոշելու համար դրան նայել տարբեր տեսանկյուններից: Ես հասկացա, որ երազանքներն իրականություն դարձնելու համար պետք է լինել աշխատասեր և միշտ օգտվել ընձեռնված հնարավորություններից:

Քալանթարյան Սաթենիկ

գյուղ Չորաթան, Տավուշի մարզ,
ԳLO 2010

Փոխվեց իմ մեջ ամեն ինչ՝ աշխարհայացքս, ընկերասիրությունս, փորձեցի տեսնել դիմացինիս հույզերն ու զգացումները, դարձա ավելի ընկերասեր քան առաջ էի:

Գևորգյան Արմինե

գյուղ Սարմարաշեն, Արարատի մարզ,
ԳLO 2008

Մի տեսակ գիտելիքի մարտիկ եմ դարձել, գործի եմ դնում բոլոր աղբյուրները, իմ հարցի պատասխանն իմանալու համար, կապ եմ հաստատում իմ ընկերների, հարազատների հետ, փնտրում եմ գրքերում, ամսագրում, հեռուստատեսությամբ, օգտվում եմ համացանցից:

Նվարդ Փադուոց

գյուղ Խնձորեսկ, Սյունիքի մարզ,
ԳLO 2010

շտեմարան

Ծրագրի գաղափարներից կարևորագույնը հասակակցի կրթությամբ զբաղվելն է, քանի որ ոչ բոլոր աղջիկները հնարավորություն ունեն մասնակցելու ծրագրին, իսկ մասնակիցները պարտավոր են իրենց ուսումնասիրած թեմաները փոխանցեն հասակակիցներին, ոևովհետև մենք արդեն GLOW փոքրիկ դեսպաններ ենք:

Աթյան Մանե

գյուղ Տաթև, Սյունիքի մարզ,
ԳLO 2010

Վերափոխվեց նաև իմ աշխարհայացքը, ես հիմա հավատում եմ, որ այնուամենայնիվ կան ազնիվ ու բարի մարդիկ: Ես հասկացա, որ պետք չէ շուրջս տեսնել միայն մռայլ գույներ, միայն անարդարություն: Ես տեսնում եմ, որ չարի կողքին կա նաև բարին, վատի կողքին կա լավը և ամեն ոք, եթե ցանկանա կարող է կյանքից վերցնել միայն լավը և ապրել երջանիկ:

GLOW ամառային դպրոցի ընթացքում ես ապրեցի իմ կյանքի ամենաբովանդակալից, ամենահետաքրքիր և ուսուցողական անմոռանալի պահերը:

Համիկ Սարգսյան, գյուղ Արագածավան, Արագածոտնի մարզ, ԳLO 2010

Ես կարծում էի աշխարհից կտրված, մի անկյունում ծվարած գյուղի աղջնակ եմ, որ ընդունակ չեմ սատարել հայրենիքի բարգավաճմանը, չունեի ծրագրեր՝ օգնելու ծննդավայրին, հասարակությանը, համայնքի կյանքը հանելու տաղտկությունից: Բայց GLOW ծրագիրը բացեցին իմ աչքերը՝ նոր ընկերներ, նոր միջավայր, բովանդակալից, բազմաշնորհ գործեր ու զգացի, որ ես իրավունք չունեմ ինձ համարել թույլ էակ: Ես եկա հավասար իրավունքով, աշխարհայացքի զինանոցով, բարեփոխելու իմ հայրենիքը, ժողովրդի վաղվա օրը, կերտելու Հայաստան աշխարհի լուսավոր ապագան: Սրտանց ուզում եմ GLOW-ի կողմից ինձ ուժ ներարկած ձեռքս մեկնել մոլորակի բազմազգ մանուկներին, լիաթոք ժպտալ ու ասել սրտիս խոսքը.

Վարագույրները պետք չեն աշխարհին

Պատուհանները թող ազատ շնչեն

Բարև, ես եմ Խոտանանցի Մարիաննան, Ձեզ բոլորին շատ սիրում եմ:

Հակոբյան Մարիաննա

գյուղ Խոտանան, Սյունիքի մարզ,
ԳLO 2010

նախաձեռնող

Իմ աշխարհայացքը փոխվեց, ես դարձա ավելի շփվող ու ազատ՝ ինչը շատ կարևոր է ինձ համար: GLOW-ն օգնեց իմ անձի զարգացման և կայացման գործում, ես կայացա որպես անհատականություն:

Փիլոյան Անի

բ. Ստեփանավան, Լոռու մարզ,
ԳLO 2008

ԵՍ ԵՎ GLOW-Ն

Կա՛նգ առ, ժամանակ...

Անկարող եմ մոռանալ այդ 8 օրերը, որ ես անցկացրի Լուսակերտում, որոնք այնքան հրաշալի ու անմոռաց պահեր պարգևեցին ինձ, որ խոսքեր անգամ չեմ գտնում նկարագրելու այն:

Ողջույն բոլորին: Ես Քնարիկ Խաչատրյանն եմ Մեղրիից: Այս տարի ես մասնակցել եմ GLOW ծրագրի կազմակերպած մրցույթին և հաղթել եմ, ինչի համար շատ ուրախ եմ և ցանկանում եմ, որ բոլորին ընձեռնվի GLOW-ին մասնակցելու գեթ մի հնարավորություն:

Ի՞նչ տվեց ինձ GLOW-ն: Հաճելի ժամանակ, ուրախ ու անմոռաց պահեր, նոր ընկերուհիներ: Ձեռք բերեցի նոր գիտելիքներ, իմացա թե ինչ է FLEX-ը: Ծանոթացա թրաֆիկինգին, որի մասին ես ոչ մի տեղեկություն չունեի: Ասեմ նաև, որ ճամբարում մենք ունեցել ենք Ամերիկայից ժամանած հյուրեր, որոնց հետ ծանոթանալը ինձ համար իսկապես մեծ հաճույք էր:

Այնքան արագ ու հագեցած էին անցնում իմ օրերը: Մի յուրահատուկ բավականություն ստացա ես այդ ճամբարից: Այդ կարճ ժամանակում ես կարողացա ծանոթանալ իմ խմբի բոլոր մասնակիցներին, նրանց նախասիրություններին և մենք ընտելացել էինք, ինչպես մի ընտանիք, բայց ահա եկավ բաժանման պահը: Սրտի խոր ափսոսանքով մենք բաժանվեցինք իրարից քանզի գիտեինք, որ էլ չենք տեսնելու իրար:

Խաչատրյան Քնարիկ
ք. Մեղրի, Սյունիքի մարզ

Առաջին օրը ճամբարում մի քիչ անսովոր էր: Սակայն մի քանի ժամ անց ես շատ աղջիկների հետ ծանոթացա և շատ ընկերներ ձեռք բերեցի: GLOW ճամբարում ժամանակը անցնում էր շատ հետաքրքիր: Մենք անցնում էինք շատ կարևոր դասեր, որոնք մեզ հետագայում անպայման պետք են գալու: Ինչպես նաև մենք խաղում էինք խաղեր: Մենք սովորեցինք դասեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Գենդերային անհավասարության, Թրաֆիքինգի, Ընտանեկան բռնության և այլ խնդիրների մասին: Ճամբարում երեկոյան խարույկ էինք վառում և այդ խարույկի շուրջ պատմում էինք մեր մասին:

Ես շնորհակալություն եմ հայտնում բոլոր կազմակերպիչներին, որոնք պայքարել են այս ծրագրի համար: Շնորհակալ եմ նրանցից, ովքեր 8 օր շարունակ մեր կողքին էին և հոգ էին տանում մեր մասին:

Փաղունց Նվարդ
գյուղ Խնձորեսկ,
Սյունիքի մարզ

Առաջին օրը թիմերի բաժանվելով տվեցիք տարբեր անվանումներ, ծանոթացանք առկա կետերին և նախապայմաններին, ընտրեցինք մի ընդհանուր պար, որը եղավ այդ հանդիպման վերջաբանը:

Երկրորդ օրը պատկերացում կազմելով այն մասին, թե ի՞նչ է թրաֆիքինգը, դիտեցինք համապատասխան նշանակության ֆիլմ, այնուհետև հայտնվեցին թրաֆիքինգային իրավիճակներում՝ փորձելով նմանակել այս կամ այն դերը, գրեցինք ստեղծագործական շարադրություն՝վերոհիշյալ թեմայով, ապա երգեցինք ու պարեցինք մեր սովորության համաձայն:

Երրորդ օրվա սեմինարի նպատակը առողջ սննդակարգի քննարկումն էր, որի ժամանակ մենք ներկաներին առաջարկեցին նախապես պատրաստված ուտեստներ, ապա ըստ վերջիններիս կատարած ընտրության՝ նրանց ցույց տվեցինք, թե որքանով էր արված ընտրությունը ճիշտ: Այնուհետև գծեցինք առողջ սննդակարգի բուրգը, որով ավելի հասանելի դարձավ թեմատիկայի ըմբռնումը: Ավանդական երգ ու պարով համեմելով սույն սեմինարը՝ ավարտեցինք այն:

Չորրորդ օրը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տեղեկություններ ստանալուց հետո, մենք ուղղեցինք մեզ հուզող հարցերը, համապատասխան կարգավիճակների մասին նմանակումներ արեցինք, կազմեցինք սեմինարին վերաբերվող պլակատներ: Վերջում կատարեցինք ավանդական դարձած մեր համարները:

Աշխեն Առաքելյան
գյուղ Խնձորեսկ,
Սյունիքի մարզ

Հինգերորդ օրը մարդու և նրա իրավունքների բացահայտմանը ու պարզաբանմանը նվիրեցինք, որի մեջ ընդգրկվեցին ատամների խնամքին և կնոջ օրգանիզմին վերաբերվող մի շարք հարցեր: Պարզելու համար, թե որքանով էր հասանելի մեր տված գիտելիքները լսարանին, առաջարկեցին առանձին թեմաների մասին արտահայտել համառոտակի: Ծանր սեմինարից երգն ու պարը միակ դեղատոմսը կարող է լինել մեր հոգնածության թեթևացման համար:

Վերջին օրը կազմակերպեցինք էքսկուրսիա՝ նպատակ ունենալով մասնակիցներին տեղեկություն տալ այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում GLOW ճամբարը:

Սիրելի GLOW կազմակերպիչներ, ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ, որ դուք ինձ

գիտելիքներ եք սովորեցրել և ես այդ նույն գիտելիքները սովորեցրել եմ իմ դասարանի աղջիկներին: Մենք կազմակերպել էինք սեմինարներ, սեմինարները կազմել էինք 6 օրվա համար:

Առաջին օրը մենք խոսել ենք բնավորության մասին, մարմնամարզությունը մեր կյանքում: Վերջում մենք ամեն թիմին ասել ենք, որ իրենց թիմի համար անուն որոշեն, երգեն ու նաև նշանաբանն ունենան, իսկ հաղթող թիմին մենք տվել ենք տետրեր:

Երկրորդ օրը մենք խոսել ենք թրաֆիքինգի մասին, թե ի՞նչ է թրաֆիքինգը: Նախ նրանք են պատասխանել, իսկ հետո մենք ենք խոսել: Հաջորդը մենք թրաֆիքինգի մասին ֆիլմ ենք դիտել: Հաջորդ քայլը նրանք ներկայացրել են թատրոն, թատրոնի նպատակն էր. Կին, ով հայտնվել էր այդ իրավիճակում: Եվ նրանք գրել են շարադրություն «Ես հայտնվել եմ այդ իրավիճակում» թեմայով: Եվ հաջորդ քայլը նրանց նշանաբանը, երգն ու պարն էր:

Երրորդ օրը մենք խոսել ենք առողջ սննդի մասին, հաջորդը մենք պատրաստել ենք սալաթ և պիցցա և նրանց ասել ենք, որը առողջարար է այն էլ կերեք: Եվ հաջորդ քայլը նրանց ներկայացրել ենք սննդի բուրգը: Մյուս քայլը մենք խաղ ենք խաղացել, թղթերի վրա մենք գրել ենք տարբեր ուտելիքների անուններ և թաքցրել մեր դասարանում և նրանք առողջարարը դրել են մի կողմում, իսկ ոչ առողջարարը մյուս կողմում: Մյուս քայլը նրանք նկարել են իրենց ամենօրյա ուտելիքները: Եվ վերջին քայլը իրենց նշանաբանը, երգն ու պարը:

Չորրորդ օրը մենք խոսել ենք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին և հաջորդ քայլը խաղ խաղալ: Հաջորդ քայլը հարցեր բաժանել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: Հաջորդ քայլը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին տրամաբանական հարցեր տալ: Հաջորդը դիմախաղ ներհայացնել և վերջում նշանաբան, երբ ու պար:

Հինգերորդ օրը մենք խեսել ենք մարդու իրավունքների մասին: Հաջորդ քայլը խոսել ենք թե ով է մարդը և նրա իրավունքները: Մյուս քայլը ատամի խնամքի մասին է, թե ինչպես խնամել մեր ատամները: Հաջորդ քայլը կնոջ կառուցվածքի մասին է: Եվ հաջորդ քայլը քննարկում ենք վերջնական թեմաների մասին: Եվ հաջորդ քայլը նշանաբանը, երգն ու պարը:

Իսկ վեցերորդ օրը, մեր դասարանով, մեր սիրելի դասղեկի հետ գնացել ենք էքսկուրսիա դեպի Հին գյուղ: Ես ձեզանից շատ-շատ շնորհակալ եմ, ինձ գիտելիքներ ստանձնելու համար: Ես ձեզ ցանկանում եմ նորանոր հաջողություններ:

> ***Այդ օրերը GLOW-ում,***
> ***Հրաշալի էր անցնում,***
> ***Աղջիկների հետ շփվում,***
> ***Դեսից-դենից էինք խոսում:***
> ***Մանկությունս էի հիշում***
> ***Ու բոլորին շնորհակալություն ասում:***

Ողջույն...

Ես Ռիտան եմ: Ապրում եմ Հայաստանի ամենահրաշալի, գեղատեսիլ Տավուշի մարզի Զորական գյուղում: Սովորում եմ 10-րդ դասարանում: Առաջին անգամ GLOW-ի մասին լսել եմ իմ ուսուցչուհուց: Նա ինձ առաջարկեց, որ լրացնեմ դիմում-հարցաթերթիկը: Ես լրացրի ու ի ուրախություն ինձ՝ անցա: Հաղթելու դեպքում հունիսի 26-ին գնալու էի Լուսակերտ՝ 8 օրով: Ես անհամբերությամբ սպասում էի, թե երբ է գալու այդ օրը: Եվ վերջապես եկավ այդ օրը և ես գնացի: Իմ կյանքի այդ հրաշալի 8 օրերի ընթացքում ես շատ բան սովորեցի: Ավելի շատ հմտություններ ձեռք բերեցի ինքնաճանաչման, գենդերային անհավասարության, կարիերայի, առաջնորդության, առողջ ապրելակերպի ասպարեզներում: Շատ ընկերներ ձեռք բերեցի Հայաստանի տարբեր մարզերից: Իմ յուրաքանչյուր օրն ացել է բավականին հետաքրքիր ու արկածներով լի, որ չնկատեցի թե ինչպես անցան այդ հրաշալի 8 օրերը:

Ես շատ մեծ տպավորություններով եմ վերադարձել գյուղ: Վերադառնալով գյուղ՝ ես խնդրեցի մեկ օր տրամադրել մեր գյուղի կամավորական խմբակում, որպեսզի իմ տպավորությունների մասին պատմեմ բոլորին և հաղորդեմ իմ ստացած գիտելիքները: Տեսնելով ոգևորված երեխաներին՝ ես նրանց համար կկազմակերպեմ սեմինար պարապմունքներ և դրա համար արդեն ստացել եմ դպրոցի տնօրենի թույլատվությունը՝ սեմինարը դպրոցում անցկացնելու համար: Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում GLOW ծրագրի տնօրինությանը այն հրաշալի 8 օրերի համար, ու նաև մեզ՝ հեռավոր գյուղերում ապրող երեխաներիս ուշադրության արժանացնելու համար:

Անանյան Ռիտա
գյուղ Զորական,
Տավուշի մարզ

Աղջիկների Առաջնորդության և Զարգացման Ամառային Դպրոց 2011

Դիմումները ընդունվում են մինչև 2011թ. մայիսի 15-ը:

«Ստեփանավան Երետասարդական Կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է GLOW աղջիկների Առաջնորդության և Զարգացման Ամառային Դպրոց 2011:

Ծրագրի նպատակն է ինքնաճանաչման և ինքնազարգացման հնարավորություններ ընձեռնել 13-16 տարեկան հայ աղջիկներին և զարգացնել նրանց առաջնորդության հմտությունները: Ամառային դպրոցի թեմաները ներառում են կարիերայի զարգացում, առողջ ապրելակերպ, գենդերային հարցեր, մարդու իրավունքներ, բնապահպանություն, թիմային աշխատանք, անձնական հմտությունների զարգացում, և ստեղծագործական մտքի ձևավորում:

*Ծրագրի տևողությունը 7 օր է, **Հուլիսի 6-ից** մինչև **Հուլիսի 12-ին:** Ամառային դպրոցի վայրը կհաստատվի հունիս ամսին: Պարապմունքները վարելու են հայ և ամերիկացի (ԱՄՆ Խաղաղության Կորպուսի կամավորներ) հմուտ դասընթացավարները: Աշխատանքային լեզուն հայերենն է: Ծրագիրն անվճար է, կփոխհատուցվեն տրանսպորտային ծախսերը:*

Ամառային դպրոցին կմասնակցեն 50 մասնակիցներ: Կարող են դիմել Հայաստանի բոլոր մարզերում բնակվող, 8-11-րդ դասարաններում ուսանող աղջիկներ: Մասնակիցների դիմումները կդիտարկվեն և ընտրությունը կավարտվի հունիսի սկզբին: Ընտրության արդյունքների մասին ընտրված մասնակիցները կտեղեկացվեն Ստեփանավանի երիտասարդական կենտրոնի աշխատակիցների կողմից հունիս ամսվա սկզբին:

Դիմումների ստացման վերջնաժամկետը մայիսի 15-ն է:

Դիմումները կարող եք ուղարկել syc_ngo@yahoo.com, simonyan.lilit@gmail.com էլեկտրոնային հասցեներով, փոխանցել ԱՄՆ Խաղաղության Կորպուսի կամավորների միջոցով կամ ուղարկել հետևյալ հասցեով՝

Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոն ՀԿ
Չարենցի փող. 137, Ստեփանավան 1901, Հայաստանի Հանրապետություն,
Կոնտակտային հեռախոսահամարներ՝ 055 201187 (Մելինե), 091 232545 (Լիլիթ), 094 106366 (Ամանդա):

Դիմում

Խնդրում ենք գրել պարզ ձեռագրով

1. Ազգանուն, անուն_____ Տարիք _____
2. Հասցե. Մարզ _____ Քաղաք/Գյուղ _____
   Փողոց _____ Շենք/Տուն _____ Բնակարան _____ Փոստի կոդ _____
   Հեռախոսի համար _____ Բջջային հեռախոսի համար _____
3. Դպրոց _____ Ո՞ր դասարան եք **փոխադրվելու սեպտ. 2011թ.-ին** _____

Հարցերը – Խնդրում ենք պատասխանել բոլոր հարցերին:

1. Արտադպրոցական ի՞նչ միջոցառումների ես մասնակցել: Արդյո՞ք ներգրավված ես որևէ խմբակում կամ ակումբում: Ներկայացրու մանրամասներ:
   _____
   _____
   _____
   _____
2. Ի՞նչ նպատակներ ունես ապագայի համար:
   _____
   _____
   _____
3. Ի՞նչու ես ուզում մասնակցել GLOW ամառային դպրոցին:
   _____
   _____
   _____
   _____
4. Նշված GLOW թեմաներից որո՞նք են քեզ առավել հետաքրքրում *(առաջնորդություն, թիմային աշխատանք, կարիերա, գենդեր, առողջ ապրելակերպ, թրաֆիկինգ, բնապահպանություն, մարդու իրավունքներ, ինքնաճանաչում)*: Ի՞նչու:
   _____
   _____
   _____
   _____
5. Ծրագրի ընթացքում սովորած հմտությունները ի՞նչպես են քեզ օգնելու ապագայում:
   _____
   _____
   _____
   _____
6. *Տեղեկություն.*

   Ես կարդացել և հասկացել եմ վերոհիշյալ ինֆորմացիան: Եթե ես ընտրվեմ մասնակցելու ծրագրին, ապա համաձայն եմ հետևել ծրագրի կանոններին և ես հասկանում եմ իմ գործողությունների հետևանքները:

_____ (Անուն, ազգանունը) _____ (ստորագրություն)

Ամառային Դպրոց

ԳԼՕ ծրագիրը սկսվում է ամենամյա ամառային դպրոցով: 2008-2010 թվականներին ամառային դպրոցին մասնակցել են 139 աղջիկներ: Ամառային ճամբարի ընթացքում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, հետաքրքիր ինտերակտիվ և ուսուցողական խաղեր, դասընթացներ, որոնք նպատակ ունեն բարձրացնել անձի ինքնաճանաչու մը, զարգացնել գիտելիքներն ու հմտությունները:

Կրտսեր ջոկատավար

Ամեն տարի մի քանի ԳԼՕ շրջանավարտներ հնարավորություն են ունենում մասնակցել ամառային դպրոցին նոր կարգավիճակով՝ որպես կրտսեր ջոկատավար: Նրանք օգնում են ավագ ջոկատավարներին կազմակերպչական հարցերում:

Հասակակցի կրթություն

ԳԼՕ ծրագրի անբաժանելի մասն է կազմում հասակակցի կրթությունը՝ հնարավորություն, որ տրվում է մասնակից յուրաքանչյուր աղջկան իր գիտելիքներն ու ստացած տեղեկատվությունը փոխանցել տարեկիցներին, զարգացնել կազմակերպչական հմտությունները: Ամառային դպրոցից անմիջապես հետո մասնակից աղջիկներից շատերը սեմինարներ, միջոցառումներ և համայնքային ծրագրեր են կազմակերպում իրենց համայնքներում:

Կապերի պահպանում

ԳԼՕ -ի մասնակիցները հավաստիացնում են, որ շարունակում են կապը մասնակից աղջիկները հետ՝ միմյանց տեղեկացնելով իրենց հաջողությունների մասին և տարածելով հետաքրքիր և անհրաժեշտ տեղեկատվություն: ԳԼՕ ծրագրի տեղեկատվության շնորհիվ:

ԳԼՕ մասնակիցներից Մանուշակ Ավագյանն ու Նանե Գրիգորյանը մասնակցել են ավագ դպրոցականների փոխանակման ծրագրին (FLEX) և Թամարա Խլղաթյանը մասնակցել է ուսանողների փոխանակման ծրագրին (UGrad) ուսանելով ԱՄՆ-ում: ԳԼՕ աղջիկներից ոմանք հաջողությամբ ավարտել են դպրոցը և ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոնը շարունակաբար կապի մեջ է պահում բոլոր մասնակիցների հետ և ուրախանում է բոլորի հաջողություններով:

ԳԼՕ լրագիր

ԳԼՕ լրագիրը նպատակ ունի կապող օղակ լինել կապող օղակ աղջիկների համար, տարածել ԳԼՕ-ի նպատակներն ու ձեռքբերումները: ԳԼՕ լրագրի հոդվածների հեղինակներ կարող են լինել ինչպես ԳԼՕ ճամբարի մասնակիցները, այնպես էլ նույն տարիքի (12-16 տարեկան) աղջիկներ Հայաստանի բոլոր մարզերից:

Մարզային հանդիպումներ

Մարզային հանդիպումներ են կազմակերպվում ԳԼՕ մասնակից աղջիկների հետ, որպեսզի նրանք հանդիպեն միմյանց, հետադարձ հայացք գցեն ԳԼՕ-ին, պատմեն իրենց հաջողությունների ու մտահոգությունների մասին:

Մեկօրյա սեմինարներ մարզերում

Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոնի անդամները և ԱՄՆ Խաղաղության Կորպուսի կամավորները մասնակից աղջիկների հետ անց են կացնում սեմինարներ առողջապահություն, գենդեր, թրաֆիկինգ, մարդու իրավունքներ, թիմային աշխատանք, կամավորականություն և այլ թեմաներով Հայաստանի տարբեր մարզերում:

Սեմինարներին մասնակցում են ոչ միայն ԳԼՕ-ի մասնակիցները, այլ նաև իրենց տարեկիցները:

ԳԼՕ ծրագիրը բազմիցս լուսաբանվել է մամուլում, ինտերնետում և տեղական ու մարզային հեռուստաալիքներով: ԳԼՕ-ի մասին հոդվածներ կարող եք գտնել այս կայքերում՝

http://www.irex.am/arm/newsroom/womancamps.html

http://www.america.gov/st/developenglish/2009/October/20091023163949berehellek8.436221e-02.html?CP.rss=true

ՈՒՂԱՐԿԵՔ ՔՈ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ GLOW ԼՐԱԳՐԻՆ

Ցանկանում ենք փորձել քո ուժերը լրագրության ասպարեզում: Ուզում ենք քո հասակակիցներին պատմել քո համայնքում, դպրոցում կատարվող միջոցառումների, իրադարձությունների մասին կամ գուցե՞ խոսել քեզ հուզող հարցերի շուրջ: Հաջորդ լրագրի առաջարկվող թեմաներն են՝ շրջակա միջավայր, երեխաների իրավունքներ, կամավոր լինելու կարևորություն, խնդիրներ իմ համայնքում և այլն: GLOW լրագրի խմբագրությունը սիրով կընդունի ձեր հոդվածները:

****Խնդրում ենք այս հատվածը չլրացնել****

Peace Corps Volunteers Please Fill Out (optional)

Please note that we can only accept 40 participants. If you strongly feel that we should accept one of your applicants use this space in the application to let us know this is a strongly recommended applicant and tell us why.

1. PCV Name _____

2. Best contact method to inform you of camper selection

☐ Phone _____ (Number) ☐ Email _____ (Email address) ☐ Other _____

3. Have you personally taught this student in a classroom or seminar setting? ☐ Yes ☐ No

   a. If no, how do you know the applicant?

4. How strongly do you recommend this applicant? ☐ Very ☐ Somewhat ☐ Not at all

5. Is there any other information we should know about the applicant?

Սույն դիմումի ձևը կարող եք պատճենահանել:

Սույն լրագրի հրատարակումը հնարավոր է դարձել ԱՄՆ Պետական Քարտուղարության ֆինանսական աջակցությամբ՝ ԱՄՆ դեսպանատան ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ձետեղված նյութերը և կարծիքները հեղինակային են և չեն արտահայտում աջակից կառույցի տեսակետները:

Ստեփանավանի Երիտասարդական Կենտրոն
Հեռ.՝ (0256) 23930, (091) 232545 էլ.փոստ: syc_ngo@yahoo.com
Հասցեն՝ ՀՀ Լոռու Մարզ, ք. Ստեփանավան, 1901, Չարենցի 137
www.stepyouthcenter.org

Տպագրվել է 1000 օրինակից
Վանաձորի «ՍԻՄ Տպագրատուն» ՍՊԸ-ում
հեռ.՝ (0 322) 4-03-29